

յոյն վանականները կարող են երկիւղ կրել, որ կը դատաւարա-
տուեն ըանտարկութեան՝ ճիշտ նոյն ձևով, ինչպէս որ այդ
տեղի ունեցաւ 1901 թուի նոյնամաս գործում:

ԻճՀԱՂԱՏԻ Ե ՎԻԿՈՒԹԻՆԸ.

Այս վերնագրով Церк. Вѣстник-ի № 6-ում տպուած է
Ձեւցով քահանայի յօդուածը, որն այնքան զեղեցիկ կերպով է
լուսարանում մեր ժողովրդի ներկայ անտեսական կացութիւնն
ու հոգևորականների սովորական դերքն ու գործունէութիւնը,
այնպիսի համարձակ և մերկ ճշմարտութիւն է, որ չենք կարող
ամբողջովին առաջ չը բերել Արարատի ընթերցողներին ծանո-
թացնելու համար, մանաւանդ որ մեր գիւղացին, գործաւորն
ու քահանան էլ միանգամայն նոյն վիճակում և նոյն պայման-
ներումն են ապրում ու գործում: Քահանաներից մինը նոյն
թերթի № 3-ում «Տխուր դէպքերի պատճառ» էր համարում
գործարաններին կից սեփական եկեղեցիներ չունենալը, բան-
ւորների անտեսական վատ պայմանները, սեփական քահանա-
ների բացակայութիւնը և այլն: Ձեւցովը գտնում է, որ այդ
բոլորը ճշմարտութիւն է: Բայց կարծել, որ դրանումն է ողջ
չարիքը, նշանակում է նկատել մի միայն թշուառութեան մի
մասը և փոխանակ արմատական բժշկութեան, առաջարկել
միայն ցաւերը մեղմող օժանելիք:

«Մեր ժողովուրդը բազմաչարչար է. նիւթական աղքատու-
թիւնը վաղուց ճնշում է նրան. նա այդ բանին սովորել է որ-
պէս հայրենի արհաւիրքի: Ի՞նչ արած, — դատում է նա. — երևի
Աստուած այդպէս է կամեցել. ամենքն էլ հօ՛ խառ չեն հագ-
նելու . . . Թող միայն տմեն ինչ կանոնաւոր լինի, ճշմարտու-
թեամբ, խղճով և Աստուծոյ կամքով լինի»: Եւ երբ չքաւորու-
թիւնը իրենից է, նա անտրտունջ տանում է այն: Բայց եթէ
տեսնում է, որ նրա չքաւորութեան խնդրում վնասուել է Աս-
տուածային ճշմարտութիւնը, այդ ժամանակ . . . այո՛, այդ
ժամանակ դադարում է համբերող լինելուց, այն ժամանակ ոչ
տաճարը և ոչ էլ հովիւը կարող է դուպել նրան:

— «Ինչո՞ւ կառավարութեան դէմ, կեանքի սօցիալական
կազմակերպութեան դէմ ապստամբութիւն չկայ և չի կարող
լինել պրաւօսլաւ երկրագործ ժողովրդի մէջ գիւղերում, հար-
ցնում էր «Տխուր դէպքերի պատճառներ»-ի հեղինակը»:

Նա մի քանի բան մոռացել է. — ասում է Ձեւցովը: — Հապա

ինչ էր երկու երեք տարի առաջ Պալատայի և հարեան նա-
հանգներում տեղի ունեցող զիւղացիների ապստամբութիւնը:
24^ր որ այնտեղ ապստամբել էր հողը, ռամիական իսկական աս-
տառը՝ ամենապարարտ սեահողը. ապստամբուել կեանքի սո-
ցիալական կազմակերպութեան դէմ: Իսկ ով որ Սիվերսկից և
Տէրիօքից հեռու է ամառանոց գնացել, նա չէր կարող չը նկա-
տել մեր նստակեաց կեանք վարող երկրագործ զիւղացիների
գրգռուած անհանգիստ տրամադրութիւնը: Խօսք ու զրոյցներ,
որ աղաները (իշխանները) ապօրինի՝ հակառակ օրէնքի են հողին
տիրում, որ թագաւորը նրանցից կը խլի հողը և կը բաժանի
զիւղացիներին, որ իշխանութեան մօտ ճշմարտութիւնը քիչ է
և այն էլ դանել չես կարող, որ պէտք է գնալ թագաւորի մօտ
և այնտեղ որոնել ճշմարտութիւնն ու արդարութիւնը, այդ և
նման շատ բաներ, որոնք չեն գետեղւում գրաքննական մա-
մուլի շրջանակում, բացէ ի բաց ասում և քննադատում են:
Ի հարկ է մեզ մօտ այդ բոլորը բացատրելու համար իսկոյն կը-
որոնեն անգլուհուն՝ խորամանկ եապօնացու հետ: Մանուանդ
որ այդ և հեշտ է և հաճելի. նշանակում է, — մեր ներքին կեան-
քում ամեն ինչ լոււ է, միայն զիւղերից պէտք է սրբել ու
տակահան անել յեղափոխութեանն երին . . . Ես իւրաքանչիւր
տարի ամառուայ երկու երեք ամիսն անց եմ կացնում խուլ
նահանգի մի խուլ գաւառի զիւղերում, որտեղ քահանան և
գլաւան են միակ կրթուած դասակարգ կազմում և որտեղ մի
միայն բարեմտութիւն է սերմանում: Գիւղացին աննկատելի
կերպով մտաւ որապէս հասունացել է, նրա աշխարհայեացքն
ընդարձակուել է, մեծացել և կեանքի անարդարութիւնը աւելի
որոշ, պարզ և պահանջկոտ է դարձել: Նա արդէն վրդուլում է
իշխանական դարակարգի՝ աղաների դէմ, ոչ թէ նրա համար
որ նրանք աղա են, իսկ ինքը ռամիկ, այլ նրա համար, որ աղա-
ների մօտ տեսնում է շատ ու շատ անարդարութիւններ դէպ
իրենց, իսկ իշխանութեան կողմից՝ նա տեսնում է, թէ ինչպէս
է խրախուսում աղաներին, իսկ իրեն ճնշում: Եւ ահա այդ
բոլորի հետեանքը. 1) շատ զիւղերում ոտտիկանութիւնը վա-
խում է երեւոյց, իսկ ուրեաղնիկներին (պահապան զինուոր-
ների գլխաւորներին) սկսան յաճախակի քոթակ տալ՝ ոչ թէ
հարբեցութիւնից, այլ դիտաւորեալ, կանխամտածած կերպով:
2) Անցեալ ամառը՝ առանց ընդարձակ քարոզի ու երկարաբա-
նութեան՝ գործադուլ տեղի ունեցաւ: 70 վերստ տրամագիծ
ունեցող շրջանում եղած զիւղերի բնակիչները որոշեցին եր-
կրագործական աշխատանքի չը գնալ վաճառականների և պա-

բոններէ մօտ, մինչև որ վերջիններս մի դէտեառին ($1\frac{1}{2}$ խալիար) հսկելու համար 12 բուրլի չը վճարեն: Պարոններն առաջ ծաղրում էին, բայց վերջը սկսան զայրանալ, իսկ գիւղացիք իրենց որոշման վրայ հաստատ էին մնացել: Աւերջ ի վերջոյ հարկաւոր եղաւ բանակցութեան մէջ մասնէ նրանց հետ և մի միայն փոխադարձ զիջողութիւններից յետոյ սկսուեց աշխատանքը:

Այսպէս ահա, երկրագործ ժողովրդի կեանքը բոլորովին խաղաղ չէ և նա արդէն լցուած է այն բոլոր նիւթերով, որոնք բազմաչարչար գիւղացիների կեանքում ծնում են անբաւականութիւն, տրտունջ, խռովութիւն, գործադուլ և ապստամբութիւն: Իսկ վերոյգրեւելից պարզ երևում է, որ եկեղեցիներով և նրանց թիւը շատացնելով չի կարելի գործին շօշափելի օգնութիւն հասցնել: Ժողովրդին խաղաղացնելու համար պահանջում է քչացնել նրա կեանքի մէջ գոյութիւն ունեցող այն պատճառները, որոնք խռովում են նրան: Երկար և ուշագիւր դիտելուց յետոյ մեր գիւղացու կեանքն ու իշխանութեան և պարոնների վերաբերմունքը դէպի նա, ես կարծում եմ, որ հարկաւոր է արմատախիւ անել ժողովրդի կեանքից անարդարութիւնը. հարկաւոր է ուժեղ, մշտական և աներկիւղ ձայն ճշմարտութեան և Աստուծոյ արդարութեան մասին, թէկուզ այդ ձայնը շատ շատերին հաճիլի չլինի:

Ահա հէնց զբանուամն է մեր ցաւը, որ մենք ինքներս, հոգեւոր հայր և ուսուցիչ կոչուածներս, շատ ենք նայում անձանց և նրանց դիրքին և հեռուողաբար ու բաւարար հաստատակամութեամբ չենք խօսում Աստուծոյ արդարութեան մասին: Հէնց որ բանուորի կեանքում անարդարութիւն ենք տեսնում, իսկոյն զինւում ենք նրա դէմ, իսկ երբ անարդարութիւնը տեսնում ենք հզօրների, իրաւատէրերի կեանքում, մենք աշխատում ենք, եթէ ոչ բոլորովին արդարացնել, գոնէ մի կերպ ներել նրանց, չենք մերկացնում անիրաւութիւն գործողներին, այլ միայն ժողովրդին ենք համբերութեան հրաւիրում:

Աստուծոյ արդարութեան մասին այդ ձևով խօսելուց յետոյ թէկուզ կրեք երեք տաճար շինիւր ամեն մի գործարանին կից, խռովութիւնները ոչ կը պակասին և ոչ էլ կը վերջանան: Յայտնի է, որ եթէ քաղցածին միսիթարելու համար ասենք, որ Աստուած կը պատժի նրան հաց չը տուողներին, իւր հացից մաս չը հանողներին, մենք նրան ոչ միայն չենք կերակրել և չենք հանգստացնիլ, այլ կը գրգռենք նրա ախորժակը և կը զայրացնենք, դառնութիւն կը պատճառենք, քան ինչ բանի որ նա նենք, դառնութիւն կը պատճառենք, քան ինչ բանի որ նա ինքը կը հասնէր առանց մեր միսիթարութեան: Մեր ժողովուրդն

էլ որոշ չափով սովի է դատապարտուած իւր կեանքում Աստուծոյ արդարութեան բացակայութեամբ և մի միայն Աստուծոյ տաճարները չեն կարող յազեցնել նրա սովը. նա կը պահանջի համարձակ, բաց, քրիստոնէական և մարտիրոսական ձայնը աստուածային արդարութեան և Աստուծոյ ճշմարտութեան մասին Նւ եթէ այդ ձայնը նա կըսի թէկուզ իւր գործարանի եկեղեցուց դուրսը, նա կըզնայ նրա ետեւից, նա կըցնի՝ թէկուզ օտար տաճարները, իրեն սեփական կը դարձնի նրանց և կը զնայ այդպէս գոչող հովուի ետեւից, նրան կըյարգի, նրան կը միանայ, նրան կը դարձնի իրեն հովիւ և առաջնորդ

Հարք և եղբայրք. գոչում է հեղինակը. — մենք երանի ենք տալիս հին Ռուսաստանին, որ այնքան անձնուրաց հովիւներ ունէր. յիշենք նրանց անուններն և գործը և այդ կլինի ներկայ ախուր դէպքերն հասկանալու և պարզելու առաջին քայլը:

Ճշտապահութեան և զգուշութեան վերաբերեալ այնքան բան կայ մեր կեանքում, այնպէս է զդուեցրել այդ բանը բոլորին, որ եթէ այսուհետեւ էլ այդպէս շարունակուի, մենք բոլորովին միայնակ կը մնանք. հօտի մի մասը կը դիմի աղանդաւորութեան, իսկ միւսը ոօցիալական կուսակցութիւններէ: «Տխուր դէպքերը» Աստուծոյ մեղ ուղղուած ահեղ կոշ են: Դա Քրիստոսի ձայնն է. — «Ապաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւն Աստուծոյ» (Աւետարանի ընթերցուած յունվարի 9 ին. դարմանալի զուգարդիպութիւն և յիշատակ Փիլիպպոս ճգնաւորի):

— Արդեօք նոյն ճշտապահութեան և զգուշութեան արդիւնք չէ և մեր կողմից գրուանի տակ թագցրած ճրագը, որի լոյսը մեր ժողովուրդը շատ քիչ դէպքերումն է մեր միջոցով և աջակցութեամբ տեսնում և ունենալով միևնոյն վերքեր և կարիքներ, ինչ որ ռուս գիւղացին, շփոթուած հոգով և վրդովուած ուրիշ տեղ է դանում իւր հոգեկան ծարաւն յազեցնելու աղբիւրը:

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Ինչպէս Արարատի ընթերցողներին յայտնի է Ֆրանսիական Առաջին միևնոյն կամքը, որ յայտնի էր կաթոլիկ հոգևորականութեան հիմնարկութիւններէ դէմ մղած կտաղի կռուով, հրաժարական տուեց նախարարութիւնից և նրա տեղն անցաւ Պուաշիէն, որը այդ խնդրում հեանող է Կոմբի քաղաքականութեան: